ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 157 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՇԵՆՔԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Թումանյան փողոց № 15 հասցեում գտնվող զինվորական կոմիսարիատի շենքը Գյումրի համայնքի սեփականություն է (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական № 519203):

Գյումրու զինվորական կոմիսար Գ.Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին (գրությունը քաղաքապետարանում մուտքագրված՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ին, N 11149 թվագրմամբ)՝ կառույցը և նրա կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած հողամասը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 685-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան փողոցի № 15 հասցեի 1070,95 (հազար յոթանասուն ամբողջ իննսուն հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով կառույցը և դրա կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 0,222232 (զրո ամբողջ երկու հարյուր քսաներկու հազար երկու հարյուր երեսուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով՝ 30 (երեսուն) տարի ժամկետով, տրամադրել Գյումրի քաղաքի զինվորական կոմիսարիատին:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել պատմաճարտարապետական հուշարձան-կառույցի պահպանության պարտավորագիրը:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.